

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Արմեն Հարությունյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն) 2017 թվականի օգոստոսի 15-18-ը
4.	Հրավիրող կողմը	ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանս կազմակերպություն (UNCTAD)
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	<p>Ծանոթանալ ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանս կազմակերպության կողմից իրականացվող արտաքին շուկաների ուսումնասիրության մեթոդաբանությանն և քննարկել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում դրանց ներդրման հնարավորությունը:</p> <p>Քննարկել ներդրումային ծրագրերի պատրաստումը: Քննարկել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ ոչխարաբուծության զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:</p>
6.	Քննարկված թեմաները	<p><i>ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանս կազմակերպության հետ՝</i></p> <ul style="list-style-type: none"> - արտաքին շուկաների ուսումնասիրության մեթոդաբանություն, - արտաքին շուկաներում գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի, պահանջարկի և գների դինամիկայի ուսումնասիրություն, - օրգանական գյուղատնտեսության խթանմանն ուղղված ծրագրեր և բիովառելիքի արտարդրության հնարավորություններ, - ներդրումային միջավայրի բարելավում և ներդրումային ծրագրերի մշակում: <p><i>Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ՝</i></p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ-ում գյուղատնտեսության բնագավառում իրականացվող և առաջիկայում իրականացվելիք ծրագրերը, - ոչխարաբուծության և բրդի վերամշակմանն ուղղված նոր ծրագրերի իրականացում, - գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ փորձի փոխանակում,

		<p>- կենդանիների համարակալման ու հաշվառման ծրագրերի իրականացման ֆինանսավորման հնարավորությունների քննարկում:</p>
<p>7.</p>	<p>Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը</p>	<p>Կայացել են հանդիպումներ ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանս կազմակերպության տեխնոլոգիայի և լոգիստիկայի վարչության, ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի դեպարտամենտի առևտրի, բնապահպանության, կլիմայի փոփոխության և կայուն զարգացման բաժնի, նույն դեպարտամենտի մրցակցության և սպառողների քաղաքականության բաժնի, ինչպես նաև ներդրումների և ձեռնարկությունների վարչության ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են գյուղատնտեսական տնտեսությունների դիվերսիֆիկացմանը, ներդրումների ներգրավմանը, թվային տեխնոլոգիաների մատչելիության բարձրացմանը, ձեռնարկատիրությանն ու նորարարություններին աջակցությանը, գյուղատնտեսական ապրանքների արտահանումների և արդար մրցակցության խթանմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխությանն ու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը վերաբերող հարցեր:</p> <p>Կայացել են նաև հանդիպումներ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ծրագրերի ղեկավարի, Եվրասիայի դեպարտամենտի ղեկավարի և Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հետ համագործակցության դեպարտամենտի ղեկավարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ՀՀ-ում գյուղատնտեսության բնագավառում իրականացվող և առաջիկայում իրականացվելիք ծրագրերը: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել «Անասնապահության զարգացում Հայաստանում» ծրագրին, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի գյուղական համայնքներում, ինչպես նաև «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի (CARD) հետ համատեղ իրականացվող «Շուկաներ Մեդրիի համար» ծրագրին:</p> <p>Հանդիպումների ընթացքում նշվել է, որ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը նպատակադրված է աջակցություն ցուցաբերել Հայաստանում մասնավոր հատվածի</p>